Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Գրաճանաչության նախապրբենական շրջանի կրթական խնդիրները մայրենիի դասաժամերին
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Բելա Գրիշայի Ալեքսանյան Դասվար +37498596534 bela.aleqsanjan.72@mail.ru մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, երաժշտություն, տեխնոլոգիա 1-ին դասարան
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	«Վանաձորի Ե. Չարենցի անվան N 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ Շիրակացի 12ա +374-322-23705 vanadzor12@schools.am

Բովանդակություն

Ներածություն	4	3
Հիմնական բովանդակություն	6	4
Եզրակացություններ, առաջարկություններ	19	5
Օգտագործված գրականության ցանկ	21	6
		7

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Որքանո՞վ է հնարավոր սովորողի գրաճանաչության նախապայքբենական շրջանի կրթական խնդիրները հաղթահարելի դարձնել մայրենիի դասաժամերին:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Սովորել սովորելու կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	1-ին դասարան 9 սովորող 4 տղա, 5 աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Դիտարկում
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	15.09.2 3

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:	Մինչև երեխան չխոսի, իր մտքերն ազատ և համարձակ չարտահայտի, նա ուսումնական գործունեության մեջ առաջընթաց չի ապրի: Իսկ փոքրիկ դպրոցականներին նոր, անծանոթ միջավայրում խոսեցնելը դժվար է: Այդ դժվարության հաղթահարման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ մթնոլորտ՝ ազատություն, անկաշկանդություն, հանդուրժողականություն, սեր և գուրգուրանք: Սրանց առկայության դեպքում փոքրիկն իրեն ապահով կզգա, իսկ ապահովությունը նրան կտա ազատ մտածելու և առանց վախի արտահայտվելու հնարավորություն:[1] Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարբերական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ: Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական–պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ

ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային, մակաբույծ բառերից՝ բացատրելով, որ «ամեն մի ավելորդ բառ մոտավորապես նույնն է, ինչ դերասանի համար ավելորդ շարժումը, երաժշտի համար՝ ավելորդ ձայնը, հնչյունը, նկարչի համար ավելորդ գույնն ու վրձնահարվածը»: Արդեն ավագ նախադպրոցական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական նախնական գիտելիքները: Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար երեխաներին հարցնում ենք, թե ինչ են տեսնում իրենց շրջապատում,

	աշակերտները սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպես են տարբերում այդ առարկաները, աշակերտները անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե որ առարկան ինչի համար է: [2] Գրաճանաչությունը բաջանվում է երեք փուլերի՝ նախապայբբենական, այբբենական և հետայբբենական: Նախապայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական, տրամաբանական-վերլուծական մտածողության և ուսումնական հմտությունների զարգացումը, բառապաշարի հարստացումը: Գրաճանաչության նախապայբբեական փուլի նպատակների հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է: [3]
Հետազոտության ընթացքը	1. Գրաճանաչության նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները Գրաճանաչության նախապատրաստական շրջանի խնդիրները կարելի է բաժանել երկու մասի՝ կազմակերպական և ուսումնական: Կազմակերպական խնդիրներից են սովորողների ծանոթացումը ուսումնական գործունեությանը, նրանց ծանոթացումը միմյանց հետ, դասարանական կոլեկտիվի ստեղծումը, ընդունելը ուսումնական հաստատության կարգուկանոնին, ծանոթությունը սեփական իրավունքներին և պարտականություններին: Նրանք պիտի կարողանան

սովորել նստարանին ճիշտ նստելը, ուսուցչին լսելը, անհարկի չխոսելը, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելը: Սովորողներին պիտի բացատրել, որ ուսուցչի հանձնարարությունը պիտի կատարել, պետք է ուշադիր լսել հրահանգը և այն չհասկանալու դեպքում հարցնել: Նրանք պիտի սովորեն՝ ինչպես օգտագործել դասագիրքը, գրենական պիտույքները, ինչպես խնամել դրանք: Միով բանիվ՝ սովորողը ստիպված է հարմարվել նոր միջավայրին և պահանջներին: Իսկ մեր խնդիրն է այդ գործընթացը կազմակերպել անցնցում: Ուսումնական խնդիրները տարբերվում են վերը նշվածից: Այստեղ մենք գործ ունենք առաջին հերթին սովորողի ուսումնական գործունեության պատրաստականության մակարդակի բացահայտման հետ, որը պետք է սկսել մինչև ուստարվա մեկնարկը: Օրինակ՝ ուսուցիչը պետք է զրուցի ծնողի հետ, հետաքրքրվի երեխայի բնավորությամբ, իմանա նրա առանձնահատկությունների մասին, որից հետո նոր կազմակերպի ուսումնական գործընթացը: Օգոստոսի 20-ից կազմակերպել ենք հանդիպումներ սովորողների հետ, ինչը շատ կարևորում ենք: Նրանց հետ ծանոթությունը նախընտրելի է սկսել ուսուցչից, պատմել նախասիրությունների մասին, որից հետո լսել սովորողներին: Կարևորը սովորողներին խոսելու և արտահայտվելու հնարավորություն տալն է, նպատակը՝ ստեղծել ապահով ու վստահելի միջավայր: Այս ամենը կարելի է կազմակերպել հարց ու պատասխանի ձևով, որտեղ մենք կստանանք մեզ հուզող հարցերի պատասխանները: Սովորողներից մեկի հետ ծանոթության ընթացքում մենք պարզեցինք, որ նա ունի ուսուցչի հետ հաղորդակցվելու

խնդիր, բառերն արտասանում է կցկտուր, խոսում է պարզ համառոտ նախադասություններով, չունի ամբողջական նախադասություններ կազմելու կարողություն, նկատելի է բառապաշարի պակաս, ուսուցչի կամ օտար մարդու ներկայությամբ կաշկանդված է և հաղորդակցվելու փոխարեն նախընտրում է նկարել: Սովորողի մոտ նման խնդիրների առաջ գալու պատճառներից մեկը վերջինիս արտերկրում ապրելն է: Երեխան այս դեպքում ստիպված է ոչ միայն ադապտացվել ուսումնական գործընթացին, այլև հարմարվել երկրին, լեզվին, միջավայրին: Ուսումնական գործընթացը այս սովորողի հետ ճիշտ կազմակերպելու համար շատ կարևոր է այսքանն իմանալը, որովհետև գործընթացի շարունակությունը նրա անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով կփորձենք կազմակերպել:

2. Գրաճանաչության նախապրբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունը մայրենիի դասաժամերին

Նախապրբենական փուլի նպատակներին հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է: Նմանատիպ առաջադրանքների օրինակներով հարուստ է Այբբենարանը, որտեղ կան իրավիճակին և դասարանի ընդհանուր մակարդակին համապատասխան օրինակներ: «Մայրենի» առարկայի գլխավոր առանձնահատկությունը գործնական ուղղվածությունն է, ուր ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ է տրվում բառի ուղղախոսական և ուղղագրական կանոնների ճիշտ կիրառմանը, բառիմաստի ընկալմանը, կիրառմանը, բառերի

փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերին: Սա նպաստելու է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը: Այբբենարանում ներկայացված թեմատիկ նկարները, նկար-պատմությունները, գծապատկերները, բառի վանկային ու հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման, կարդալու կարողության ձևավորման հիմքերն են: Նախաայբբենական բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնանա հետաքրքրասիրություն, սեր գրքի նկատմամբ, սովորելու ցանկություն: Հանույթով կատարելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքները՝ երեխաներն ուժեղ են զգում իրենց: Նախաայբբենական փուլը կազմակերպելիս նպատակային առաջին գործողությունը երեխաների ուշադրության կենտրոնացմանը միտված վարժությունների կազմակերպումն է: Երեխաներին առաջադրում ենք նախ հեշտ վարժություններ, ապա աստիճանաբար ավելի բարդ առաջադրանքներ: Փորձը ցույց է տվել, որ հատկապես կրտսեր տարիքի երեխաներին հետաքրքրում են բազմաբնույթ լեզվատրամաբանական ու խաղային առաջադրանքները, որոնց շնորհիվ նրանք առավել հեշտ են յուրացնում ուսուցանող նյութը: Այդ կերպ նրանք սովորում են սովորել և դրանից հանույք ստանալ, սովորում են մտածել, ինքնուրույն որոշումներ կայացնել, գնահատել իրենց կատարածը, համեմատել ուրիշների հետ, մրցել: Զարգանում են նրանց ստեղծագործական երևակայությունը,

հիշողությունը, մտածողությունը, նրանց մեջ ձևավորվում են երկարատև կենտրոնանալու ունակությունները:

Ներկայացնում ենք մի խումբ խաղեր ու վարժություններ, որոնք լուծում են վերոհիշյալ խնդիրները.

· Գտի՛ր զույգը: Ուշադրության կենտրոնացմանն ուղղված ամենահետաքրքիր վարժություններից է. երեխային առաջարկում ենք տարբեր պատկերներ, որոնցից նա պետք է գտնի չափով, ձևով, գույնով մնան պատկերներ: · Գտի՛ր ավելորդը: Երեխան պետք է կենտրոնացնի ուշադրությունը և հասկանա, թե ինչպես որ պատկերն է ավելորդ:

· Ո՞րը չես տեղադրի: Սովորողը պետք է նշի այն առարկան, որը չի կարող կամ չի կարելի տեղադրել:

· Նշի՛ր հաջորդը: Առաջադրանքը կատարելիս երեխան պետք է գտնի տրամաբանական որևէ օրինաչափության, ընտրի՝ ո՛ր առարկայի պատկերը կլինի հաջորդը:

· Ո՞րն է ավելորդ: Նպաստում է ոչ միայն ուշադրության , այլև մտածողության զարգացմանը: Ըստ ինչ-որ հատկանիշի երեխան պետք է ընտրի որոշ առարկաների: Օրինակ՝ աշակերտին տրվում է գչատուփ , և նա պետք է հասկանա , որ անհրաժեշտ է այդտեղ տեղավորել գրիչները, մատիտները, ռետինը: Այս փուլից հետո անցում ենք բառակապակցություն, նախադասություն կազմելու, պատմություն հորինելու և պատմելու փուլին:

· Գտի՛ր պակասող դրվագը: Սովորողները պատմություն են հորինում թեմատիկ նկարի շուրջ: Նրանք որոշում են , թե որ դրվագներից է բաղկացած նկար-պատմությունը, և նշում են այդ դրվագը, որը պակասում է թեմատիկ նկարտում:

- Դասավորի՛ր ճիշտ հաջորդականությամբ:

	Սովորողը պետք է ճշի այն շարքը , որտեղ նկարները դասավորված են տրամաբանական հաջորդականությամբ: · Գտի՛ր սխալը: Տրված են արտասավոր տարբեր նկարներ: Այդ անհամապատասխանությունը նկատելու համար երեխայից պահանջվում են ճանաչողական գիտելիքներ և ուշադրություն: · Բառ–նկար: Աշակերտներին գաղափար է տրվում բառի մասին ՝ որպես նախադասության բաղադրիչ մաս և իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր: Ընդգրկում ենք տարատեսակ առաջադրանքներ, որոնք միտված են գրաճանաչության նախապայքբենական շրջանի խնդիրների լուծմանը. մասնավորապես՝ հոգեկան բոլոր գործընթացների՝ մտածողության, հիշողության, ուշադրության, խոսքի զարգացմանը, տարածության մեջ կողմնորոշվելու սովորողների ունակության զարգացմանը, վերլուծելու և համադրելու ունակությունների զարգացմանը: Առաջադրանքները պիտի կազմված լինեն այնպես, որ աշակերտին մղեն որոշակի ակտիվ գործողություններ կատարելուն և համապատասխանեն առարկայական ծրագրի և կրթական չափորոշչի պահանջներին: Ներկայացնում ենք մեր աշխատանքից օրինակներ.

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Դաստիարակության և ուսուցման գործընթացում նորի որոնումը անհրաժեշտ է, կարևոր և պարտադիր: Չէ՞ որ այսօրվա սովորողը պետք է ապրի, սովորի ինֆորմացիոն տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում, ուր ուսուցչի աշխատանքը ամուր թելերով պետք է կապված լինի ժամանակակից դպրոցականի կյանքին: Սովորողի՝ գրաճանաչության նախաայբբենական շրջանի կրթական խնդիրները կարելի է հաղթահարելի դարձնել մայրենիի դասաժամերին, եթե ստեղծվեն բոլոր բարենպաստ պայմանները, որտեղ սովորողը իրեն կզգա ազատ, անկաշկանդ, արժևորված: Դասարանական առողջ միջավայրը սովորողին կտա ապահովության զգցում, որը կստեղծի ազատ մտածելու, կարծիքն անկաշկանդ արտահայտելու նախադրյալներ: Այս փուլից են կախված հետագա այբբենական և հետայբբենական փուլերի ընթացքն ու արդյունքը: Սովորողի ոչ միայն նախաայբբենական, այլև կրթական մյուս աստիճաններում հաջողության բանալին բանավոր խոսքի զարգացումն է, լսողության, ուշադրության, վերլուծելու հմտությունների ձևավորումը: Ուշադրություն պիտի դարձնել նաև համագործակցային ուսուցմանը, որտեղ կձևավորվեն մի շարք կարողունակություններ: Տեղին է

	մեջբերել չինական հետևյալ ասացվածքը՝ «Ասա՛ ինձ և ես կլսեմ, ցու՛յց տուր ինձ և ես կհիշեմ, մասնակի՛ց դարձրու և ես կհասկանամ»: Նախադպրոցական շրջանի կրթական խնդիրները շատ են ու բազմապիսի, դրանց հաղթահարման ուղիներն ու հնարները՝ նույնպես, սակայն սրա արդյունավետ կազմակերպումից է կախված երեխայի հաջողությունը, նրա ուսուցման հետագա գործընթացը հաճելի ու ճիշտ կազմակերպելը: Կարծում եմ՝ մեր ուժերի ներածին չափով աշխատելու դեպքում, կհասնենք հաջողության:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2006
2. https://annadanielyan1987.wordpress.com/2021/05/29/%D5%A4%D5%AB%D5%BA%D5%AC%D5%B8%D5%B4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AE/

3. https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-19/526ec4373cfcbc7492c3ffee069be7a1.pdf